



ճառագայթներով արեւի պատկերով նման սափորներ են յայտնի Կիրովականից, Գորովինոյից, Շէյթան դաղից եւ Ախթալայից (վերջին երկուսը թուագրւում են Ք. ա. է.-Ջ. դդ.), միւսները՝ Ք. ա. թ.-Ը.12: Նոյն նշանակութեանն են ծառայել Սիսիանից յայտնաբերուած արեւի պատկերով սափորը, Հարժիսի եւ Տանձաւերի սկահակներն ու ծորակաւոր անօթը<sup>13</sup>:

Դամբարանում յայտնաբերուած ազաթէ եւ սարգիոնէ բազմատեսակ ուլունքները (զնդաձեւ, գլանաձեւ, տակառաձեւ, «կտրտած»), ձեւաբանական փոփոխութիւն չկրելով, յարատեւում են մինչեւ Ք.ա. I հազ. կէսերը: Սարգիոնէ ուլունքներից իր մշակմամբ առանձնանում է հնգանիստ ուլունքահատիկը (աղ. III, նկ. 2բ), որը հանդիպում է երկաթի լայն տարածման ժամանակաշրջանում՝ ուրարտական նիւթեր պարունակող դամբարաններում՝ Օշականի թիւ 59, Նորատուսի թիւ 22, Քուչակի թիւ 114:

Յայտնաբերուել է տարբեր ձեւաւորմամբ (կտրացող, ուղիղ, ատամնաւոր եզրերով) օճառաքարից պատրաստուած «գոմինոյաձեւ» 167 ուլունքահատիկ (աղ. V):

տանի պետական պատմական թանգարանի, Երեւան, V, 1959, էջ. 53. Յ. Իսրայէլեան, Պաշտամունքն ու հաստատիքը ու Քրոնոգրաֆան Հայաստանում, Երեւան, 1973, էջ 50:

12 А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, таб. XXI, рис. 1, 2; А. Мнацаканян, О раскопках могильников у села Головино (Армения), Краткие Сообщения Института Истории Материальной Культуры, 1952, XLVI, рис. 13/3, 5; J. de Morgan, Mission scientifique au Caucase, Paris, 1889, pl. V, fig. 110, 154.

13 О. Хнкикян, Syunik during the bronze and iron ages, Barrington, USA 2002, pl. LI, fig. 14, pl. LXXX, fig. 18, LXXXVI/22, LXXXVII/12, 13.

14 С. Есаян, А. Калантарян, Ошакан, I, Ереван, 1988, таб. LXI/2; Ն. Ենգիբարեան, Ուրարտական կնիքով դամբարան Քուչակից, Հայաստանի հնագոյն մշակույթը, 3, Երեւան, 2003, աղ. I/3. պեղումները՝ Լ. Պետրոսեանի, դամբարան N 21, 41:

Ուլունքների այս տեսակի վաղ օրինակները յայտնի են Ք.ա. Ժ-Թ դդ. թուագրւող Արթիկի III խմբի, Նորատուսի թիւ 11, Թաւրիշի թիւ 20 դամբարաններից<sup>15</sup>: «Դոմինոյատիպ» ուլունքներն աւելի յաճախ են հանդիպում Ք.ա. Թ-Ջ դդ. թուագրւող համալիրներում՝ Նորատուս, Օշական, Սարապատ, Մուխան, Խրտանոց, Արտաշական, Քեթի<sup>16</sup>: Հայաստանում այդ ուլունքների տարածման ժամանակազրական վերին սահմանը համարւում է Ք.ա. 7 դ.<sup>17</sup>: Նման ուլունքներ յայտնի են Յինցղարոյից, Բեշտաշէնից, Մինգեչաուրից<sup>18</sup>: Ուլունքատեսակը առայժմ մեզ յայտնի է միայն Արաքսից հիւսիս ընկած յուշարձաններից<sup>19</sup>: «Դոմինոյատիպ» ուլունքների հետ միասին հաւաքածոյի կազմում են նաեւ օճառաքարից պատրաստուած շեղ-

15 Т. Хачатрян, Артикский некрополь, каталог, Ереван, 1979, NN 223, 421, 539; Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, таб. XX/1; Հ. Աւետիսեան, Պ. Աւետիսեան, նշ. աշխ., աղ. 15, նկ. 4:

16 А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, рис. 82/7; Ն. Ենգիբարեան, Ուրարտական դամբարաններ Նորատուսից, ՀՀ խառնակների դամբարանի հնագիտական աշխատանքների արդիւնքներին նուիրուած գիտ. նստաշրջան, Երեւան, 1991, էջ 68; Есаян, Калантарян, նշ. աշխ., LXXV/10; Լ. Պետրոսեան, Պեղումներ Սարապատում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի Նորակառուցման (1986-1987 թթ. պեղումների արդիւնքները), Երեւան 1993, աղ. XCV/12; А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, стр. 84; Պ. Աւետիսեան, Ն. Ենգիբարեան, Գ. Սարգսեան, նշ. աշխ., աղ. ԺԴ, նկ. 40; А. Петросян, նշ. աշխ., укр. соч., таб. 70/8, 73/15:

17 Ի. Կարապետեան, Հայաստանի ցիւրիական մշակույթը VI-IV դդ., Երեւան, 2003, էջ 83:

18 М. Менабде, Ц. Давланидзе, Могильники Триалети, каталог I, Тбилиси, 1968, таб. II, рис. 51, 68, 69, таб. III, рис. 109, таб. VI, рис. 243, 263, таб. VII, рис. 300, 308, таб. XIV, рис. 479, таб. XV, рис. 556; Г. Асланов, Р. Вандов, Г. Ионе, Древний Мингечаур, Баку, 1959, стр. 82.

19 Պ. Աւետիսեան, Ն. Ենգիբարեան, Գ. Սարգսեան, նշ. աշխ., էջ 224:

անկիւնաձեւ, ուղիղ կամ կտրտուած (աղ. III, նկ. 4), քառակող հարթ եւ ատամնաւոր եզրերով (աղ. III, նկ. 3), սկաւառակաձեւ (աղ. IV, նկ. 9) տեսակները: Քառակող, ափսազարդ եզրերով տեսակի վաղ օրինակները վկայուած են թէ՛ Արթիկի III խմբի նիւթերում, թէ՛ Ք. ա. Զ.-Դ. դդ. թուագրւող ուլունքների թւում<sup>20</sup>: Այդպիսիք մեզ յայտնի են Նոր Բայագետի գաւառից, Օշականից, Լոռի բերդից, Սարապատից, Քուչակի I դամբարանադաշտից<sup>21</sup>: Միւս տեսակները հանդիպում են երկաթի լայն տարածման շրջանի դամբարաններում (Նոր Բայագետ, Քուչակ, Սարապատ, Օշական, Կարճաղբեր, Մուխան, Հայրապանք)<sup>22</sup>:

Երկնագոյն եւ սպիտակ մածուկից պատրաստուած ուղղանկիւնաձեւ, քառակող, գլանաձեւ, բաժանարարները (աղ. IV, նկ. 7, 8) տարածուած զարդերից են եւ յայտնի են Կոյբիշեւից, Անգեղակոթից, Կարմիր բլուրից: Երկնագոյն մածուկից Կարմիր մակերեսով երկու կամ երեք թեղծազարդ մանր ուլունքները եւ բաժանարար լանցքով ուղղանկիւնաձեւ բաժանարարները յայտնի են Շիրակաւանից, Կոյբիշեւից, Անգեղակոթից, Կարմիր բլուրից, Արւից, Անգեղակոթից, Կարմիր բլուրից, Արթիկից, Սեւանի աւազանից եւ այլ յուշարձաններից<sup>23</sup>: Հաւաքածոյի մէջ քանակապէս գերակշռող սպիտակ եւ երկնագոյն մածուկից մանր ուլունքները եւ բաժանարարները լայն տարածում ստացած եւ շատ հանդիպող պերճանքի առարկաներից են

20 Т. Хачатрян, նշ. աշխ., N 390; Ի. Կարապետեան, նշ. աշխ., աղ. 55, նկ. 28:

21 Հ. Պղթ ին. 20/163; Есаян, Калантарян, նշ. աշխ., таб. LXII/1, XXV/10; С. Деведжян, Лори-берд, I, Ереван, 1981, XXVII/a; Լ. Պետրոսեան, նշ. աշխ., XCV/12:

22 Հ. Պղթ ին. 20/163; Լ. Պետրոսեան, նշ. աշխ., XCV/12; Есаян, Калантарян, նշ. աշխ., таб. LXII/1; Հ. Պղթ ին. 2565/299, 1921/28:

23 Ռ. Թորոսեան, Օ. Խնկիկեան, Լ. Պետրոսեան, նշ. աշխ., աղ. LXVII/34; Օ. Խնկիկեան, նշ. աշխ., աղ. I/13; О. Хнкикян, նշ. աշխ., pl. LVII/13; Т. Хачатрян, նշ. աշխ., NN390, 539:

(աղ. IV, նկ. 16): Մէկական օրինակով են յայտնի օճառաքարից պատրաստուած խաչաձեւ (աղ. IV, նկ. 5), շեղանկիւն (աղ. IV, նկ. 4) ուլունքները, որոնց նմանօրինակները յայտնի են Հայրապանքից, Քուչակից, Նորատուսից, Սիսիանից, իսկ կոճականման, կիսակլոր երկու միջանցիկ անցքով իրի համանմանը մեզ յայտնի է (աղ. IV, նկ. 3):

Ուլունքների վերջին խումբն են կազմում դարչնագոյն ապակուց, զնդաձեւ, եփանաձեւ (աղ. IV, նկ. 12), գլանաձեւ եփանաձեւ (աղ. IV, նկ. 13) եւ գլանաձեւ լունդաւոր (աղ. IV, նկ. 11) օրինակները: Երկուդաւոր տեսակի նկ. 11) օրինակները է կարճաղբերից նմանօրինակը յայտնի է Կարճաղբերից (Հ. Պղթ ին. 2565/299), Ներքին Գետաշէնից<sup>24</sup>, իսկ Հայրիվանքի միջին բրոնզեդանից<sup>25</sup>, իսկ Հայրիվանքի միջին բրոնզեդանից նման դամբարանում յայտնաբերուել են լեան դամբարանում յայտնաբերուել են այդ ուլունքատեսակի մածուկէ օրինակները: Յաւելեալ փաթոյթներով ապակէ ուլունքները: Յաւելեալ փաթոյթով ապակէ ուլունքներ յայտնի է նաեւ ուսումնասիրուող ժամանակաշրջանի համար, սակայն նման տեսակաշրջանի համար ուլունքներ նիկայով պատրաստուած ուլունքներ յայտնի են Ք. ա. Զ.-Դ. դդ. թուագրւող համալիրներից<sup>25</sup>:

Նոր Խաչակապի թիւ 1 դամբարանում, բացի ուլունքներից, յայտնաբերուել են նաեւ կրաքարից՝ ֆալլաձեւ<sup>26</sup> եւ օճառաքարից՝ ափսազարդ եզրերով եռանկիւնաձեւ կախիկներ (աղ. IV, նկ. 1, 2): Ֆալլաձեւ կախիկի կոպիտ մշակումով քարէ եւ լաձեւ կախիկի կոպիտ մշակումով քարէ եւ ջնարակապատ ապակէ օրինակները յայտնի են վարդենիսի (Բասարգեչար) հիմնաէնից<sup>27</sup>: Կախիկի այս տեսակային դամբարանից<sup>27</sup>:

24 Ք. Նաւասարդեան, Ապակէ ուլունքների պատրաստման տեխնոլոգիան Հին Հայաստանում, (մ.թ.ա. XVI-XVII դդ.). յօդուածը յանձնուած է տպագրութեան:

25 Ի. Կարապետեան, նշ. աշխ., էջ 85, աղ. 55/59-62:

26 Նիւթի որոշումը՝ Գ. Խաչատրեանի:

27 А. Мнацаканян, Археологические находки в селе-ни Басаргечар Армянской ССР, Краткие сообщения

սակի մածուկէ, յախճապակէ եւ բրոնզէ տարբեր ձեւաւորումով օրինակները, որպէս զարդատեսակ, շատ են տարածուած երկաթեղաբան համալիրներում (Ախթամիր, Ախլաթեան, Օշական, Մուխան, Կարմիր բլուր, Շիրակաւան, Դիլիջան, Տանձաւեր, Հարժիս): Ակօսազարդ եզրերով կախիկը յայտնի է Շիրակաւանից, Շիրակահողից եւ Սեւանի աւազանից<sup>28</sup>: Նորատուսի թիւ 5 դամբարանի նիւթերում այն ուղեկցուած է «գոմինոյատիպ» եւ խաչաձեւ ուլունքներով: Կարեւորուել է ուլունքի ձեւը, նիւթը, գոյնը: Ուլունքներն ունեցել են պահպանակի նշանակութիւն՝ պաշտպանելով չար աչքից, հիւանդութիւնից, փորձանքից<sup>29</sup>: Հաւաքածոյի խաչաձեւ ուլունքը (աղ. IV, նկ. 5) հաւանաբար իր մէջ կրել է պահպանակի իմաստ, քանի որ նախաքրիստոնէական խաչը խորհրդանշել է կեանք, պտղաբերութիւն, անմահութիւն, իսկ արական ուժի հետ յարաբերակցուելով (հաւաքածոյում կայ ֆալլատիպ կախիկ) արտայայտել է բարգաւաճման, երկարակեցութեան, յաջողութեան գաղափարը<sup>30</sup>: Հացառատից յայտնի է ֆալլաձեւ կոթող, որի վրայ փորագրուած է Թ.-ժ. դդ. բնորոշ խաչապատկեր<sup>31</sup>: Չար աչքի դէմ կրել են «աչքի ուլունք»: Վաղագոյն օրինակները յայտնի

են վերին Նաւերից (3 օրինակ, Ք. ա. ժ.Վ.-ժ.Գ. դդ.), Լոռի բերդից (ուշ բրոնզ), Չեչմանիսից (Ք. ա. ժ.Գ.-ժ.Բ. դդ.)<sup>32</sup>: Նման ուլունք յայտնի է եւ Թէյշեբախի ամրոցից<sup>33</sup>: Մեր հաւաքածոյում այդ նպատակին ծառայել են «գոմինոյաձեւ» ուլունքները, որոնց վրայ ներկայացուած է աչքի պարզագոյն պատկերը՝ շրջանի մէջ առնուած կէտ: Ուլունքների համար օգտագործուող քարերին վերագրուել են համալիրներ, քարերից (ազաթ, սարգիոն, հասպիս, սաթ, գիշեր, օձաքար եւ այլն) պատրաստուած ուլունքները բուժել են հիւանդութիւններ, կանխել եւ գերմ պահել դժբախտ պատահարներից: Ուլունքներին տրուող կարեւոր իմաստաւորման փաստ է այն, որ Արգիշթէ Ա-ն նուիրատուական արձանագրութեամբ Երիւխէ երկրից բերուած խոշոր ազաթէ ուլունքը նուիրել է Արուբանէ աստուածուհուն<sup>34</sup>: Հայաստանում ուլունք-պահպանակները օգտագործուել են ընդհուպ մինչեւ Ի. դարը<sup>35</sup>: Դամբարանից յայտնաբերուած ֆալլաձեւ եւ եռանկիւնաձեւ կախիկներից առաջինը հանդիսացել է պտղաբերութեան եւ առխիկները տարածուած են եղել Հայաստանում, Հիւսիսային Կովկասում, Յունաստանում<sup>36</sup>: Ֆալլաձեւ քարակոթողների մի

ния института истории материальной культуры, вып. 60, 1955, рис. 14/7:  
 28 Ռ. Թորոսեան, Օ. Խնկիկեան, Լ. Պետրոսեան, նշ. աշխ., XLIX/27; Օ. Մարտիրոսեան, նշ. աշխ., pl LXXXII/35, А. Мартиросян, նշ. աշխ., рис. 80/7; ՀՊՊԹ Ին. 20/163:  
 29 Г. Чурсин, Амулеты и талисманы Кавказских народов, Сборник материалов для местностей и племен Кавказа, вып. 46, Махачкала, 1929, стр. 197:  
 30 Ա. Իսրայէլեան, Եկեղեցական խաչերի նախաքրիստոնէական կիրառութիւնը, Հայ ժողովրդական մշակոյթի հետազօտման հարցեր, Սրիտասարդ գիտնականների VI կոնֆերանսի զեկթեզիսներ, Երեւան, 1984, էջ 35:  
 31 Հ. Պետրոսեան, Խաչքար. ծագումը, գործառոյթը, պատկերաբանութիւնը, իմաստաբանութիւնը, Երեւան, 2008, նկ. 74:

32 Գ. Արեշեան, Հ. Սիմոնեան, Գ. Սարգսեան, Գ. Բոչարեան, Հ. Օհանեան, Հալապիտական կենտրոնի 1977-1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները, Բանբեր Սրեւանի համալսարանի, 1979, 2, էջ 119. Ս. Գեւեջեան, Հնագիտական հետազօտութիւնները Տաշիր-Չորագետում, Երեւան, 2001, էջ 128:  
 33 Б. Пиотровский, Кармир блур (альбом). Ленинград, 1970, N124.  
 34 О. Belli, The Capital of Urartu Van Ruins and Museum, Turkey, 1989, p. 85:  
 35 Ա. Իսրայէլեան, «Բուժիչ» ուլունք-պահպանակները, ԼՀԳ, 1979, N3, էջ 80:  
 36 А. Мартиросян, Город Тейшебаини, стр. 88; Е. Кагаров, Культура фетишей, растений и живот-

մասը յայտնաբերուել է դամբարանադաշտերից, որոնք մարդակերպ քանդակների հետ մէկտեղ դրուել են դամբարանաթմբի վրայ: Հ. Մարտիրոսեանն այդ երեւոյթը բացատրում է թաղման ծէսով՝ հիմքում դնելով մահուան եւ վերածննդի գաղափարը<sup>37</sup>: Եր. Լալայեանը գրում է, որ գերեզմանների վրայ դրուած ֆալլաձեւ կոթողները պաշտպանել են ննջեցեալներին չար ոգիներից, նոյն նպատակին են ծառայել եւ ֆալլաձեւ կախիկները<sup>38</sup>: Տարբեր ժամանակներում եռանկիւնի նշանով արտայայտուած բազմաթիւ խորհրդանշաններից (հող, սար, տուն, դուռ, աստուած) մէկը պալէոլիթից սկսած նաեւ իդական սեռի սիմվոլն է:<sup>39</sup> Ընդունելով այն միտքը, որ թաղման գոյքում իւրաքանչիւր իր ունէր իր նշանակութիւնն ու իմաստը, կարելի է ենթադրել, որ կախիկները փոխարինել են դամբարանի վրայ դրուող ֆալլաձեւ եւ կանացիակերպ քանդակներին՝ կրելով նոյն իմաստը:

Այսպիսով, ելնելով յայտնաբերուած իրերի եւ աղբրսների քննութիւնից, հիմնուելով սափորի եւ երկմետաղ դաշոյնի թուազրուութեան վրայ, դամբարանը կարելի է թուագրել Ք. ա. թ. դ. վերջ - Ը. դ.:

Դամբարանից յայտնաբերուած ուլունքների պատրաստման տեխնիկա-տեխնոլոգիական եղանակների պարզաբանման նպատակով կատարուել է տարբեր նիւթե-պատրաստուած (ազաթ, սարգիոն, րից պատրաստուած (ազաթ, սարգիոն, հասպիս, օձաքար, յախճապակի, սպահի) ուլունքների բինոկուլեար-մանրագիլ-

տակային ուսումնասիրութիւն<sup>40</sup>: Հանքաքարի համապատասխան մեծութեան բեկորին գլանման եւ յղկման միջոցով անհրաժեշտ ձեւը (գլանաձեւ, տակառաձեւ, գնդաձեւ, օղակաձեւ, նիստաւոր) տալուց յետոյ այն ենթարկուել է լրացուցիչ մշակման՝ մինչեւ մակերեսի լրիւ ոլորդ դառնալը: Որոշ ուլունքահատիկների մակերեսին մանրադիտակի տակ նշմարուում են սին մանրադիտակի տակ նշմարուում են կոշտուկներ: Այնուհետեւ ուլունքահատիկը շաղափուել է թելանցքի բացման համար: Կախուած ուլունքի երկարութիւնից՝ մար: Կախուած ուլունքի երկարութիւնը կազմում է մէկ կամ երկու շաղափումը կատարուել է մէկ կամ երկու կողմից: Ուսումնասիրուող ուլունքների տրամագիծը տատանուում է 1,2-2,4 մմ սահմաններում: Թելանցքի տրամագիծը երկու կողմերում տարբեր է. այն աւելի մեծ է այն ծայրում, որտեղից շաղափուել է: Պէտք է ենթադրել, որ շաղափուել է: Պէտք է ենթադրել, որ շաղափու տրամագիծը աւելի փոքր է եղել: Որպէս տրամագիծը աւելի է պղնձէ լար կամ շաղափ օգտագործուել է պղնձէ լար կամ բոյսի ամուր ցօղուն ու յղկանիւթ<sup>41</sup>:

Ազաթէ տակառաձեւ ուլունքը կա՛մ ենթարկուել է ջերմամշակման, կա՛մ էլ բարձր ջերմաստիճանի տակ կորցրել է իր նախնական արտաքին տեսքը (աղ. III, նկ. 1ա):

Հանքաքարից պատրաստուած ուլունքների յաջորդ խումբը կազմում են օլունքների յաջորդ տարբեր ձեւերի եւ նախաճառաքարից տարբեր օրինակները (աղ. III, նկ. 3, զարդումների օրինակները (աղ. III, նկ. 4, աղ. IV, նկ. 9, 10): Օճառաքարը տալի է տարատեսակ է, որը թրծումից յետոյ ձեռք է բերում ամրութիւն եւ այնպիսի կարծէտութիւն, որ կարող է խազել անգամ ապարութիւն, որ կարող է խազել անգամ ապարութիւն (կարծրութիւնն ըստ Մոսսի սանդղակի 5): Օճառաքարից ուլունքները պատրաստուել են կաղապարման եղանակով:

ныхъ въ древней Греции, С.-Петербург, 1913, стр. 36:  
 37 А. Мартиросян, նշ. աշխ., стр. 87.  
 38 Եր. Լալայեան, Դամբարանի պեղումներ խորհրդային Հայաստանում, Երեւան, 1931, էջ 201, 206:  
 39 А. Голан, Миф и символ, Москва, 1994, стр. 84:

40 Աշխատանքները կատարուել են ԵՊՀ հնագիտական հետազօտութիւնների լաբորատորիայում:  
 41 А. Лукас, Материалы и ремесленные производствa Древнего Египта, Москва, 1958, стр. 92:

Կաղապարի մէջ լցուել է նիւթի մի մասը, դրուել է «թելը», յետոյ ծածկուել յաջորդ մասնաբաժնով: Թրծման ժամանակ «թելը» այրուել է առաջացնելով միջանցիկ անցք: Ուլունքահատիկի նախազարդումն ու ձեւաւորումը կատարուել է ինչպէս թրծումից առաջ, այնպէս էլ՝ յետոյ, ինչը հաստատում են մանրադիտակի տակ երեւացող ուլունքների մակերեսների աղօսները:

Դամբարանից յայտնաբերուած ուլունքների մէջ մեծ խումբ են կազմում տարբեր մեծութեան՝ օվալաձեւ, գլանաձեւ, տակառաձեւ, գնդաձեւ, կաթնասպիտակ, բաց դարչնագոյն, մոխրագոյն, երկնագոյն յախճապակէ ուլունքները (աղ. IV, նկ. 14, 15): Դրանց չափերը տատանուում են 1,0-0,45 մմ, իսկ թելանցքի չափերը՝ 0,5-1,5 մմ սահմաններում: Այս ուլունքների նիւթն ունի հատիկաւոր կառուցուածք: Դրանք պատրաստուել են կաղապարման եղանակով եւ Ա. Լուկասի կողմից յախճապակիների դասակարգման E դասին են պատկանում<sup>42</sup>: Ի տարբերութիւն սովորական յախճապակու, որը ջնարակապատ է լինում, այս զանգուածը միջանկեալ տեղ է զբաղեցնում սովորական յախճապակու եւ ապակու միջեւ: Ենթադրուում է, որ քուարցի կամ քուարցիտի հատիկների լուծման համար նման զանգուածում եղած հիմքերի քանակի անբաւարարութեան հետեւանքով այն ունի հատիկաւոր կառուցուածք: Բացի վերոյիշեալ ուլունքներից՝ հաւաքածոն ընդգրկում է մածուկից պատրաստուած կաթնասպիտակաւուն եւ երկնագոյն, գլանաձեւ եւ օղակաձեւ մանր ուլունքների մի մեծ խումբ (աղ. IV, նկ. 16):

Հետաքրքիր են կիսաթափանցիկ ապակուց ուլունքները, որոնք, ըստ պատրաստման տեխնիկայի, բաժանուում են 3 խմբի՝ ա) պարուրաձեւ փաթաթման եղանակով պատրաստուած, բ) հալոցից ձգման

42 А. Лукас, 62. աշխ., стр. 226:

եւ միաժամանակեայ փաթաթման եղանակով պատրաստուած, գ) հալոցից ձգման եւ աքցանով հատման եղանակով պատրաստուած (տարաբաժանումը կատարուած է ըստ Զ. Ա. Լուկովայի առաջարկած եղանակի)<sup>43</sup>:

Ապակէ ուլունքներն, ըստ կառուցուածքի, կարելի է դասակարգել պարզ եւ բարդ յօրինուածքային տեխնոլոգիական եղանակով պատրաստուածները: Պարզ յօրինուածքային ուլունքներն ունեն միատարր կառուցուածք. դրանց պատրաստման համար օգտագործուել է ապակէ նոյն զանգուածը: Զանգուածն ունի նոյն բաղադրութիւնը, գոյնը, առկայ են պղպղակներ կամ չլուծուած հատիկներ:

Բարդ յօրինուածքային ուլունքները պատրաստուած են տարբեր գոյների ապակէ զանգուածներից: Տարբեր գոյները ենթադրուում են տարբեր բաղադրութեան ապակէ զանգուածներ: Բարդ յօրինուածքային կառուցուածք ունեն նաեւ նոյն գոյնի ապակէ զանգուածից պատրաստուած ուլունքահատիկները, որոնց վրայ լաւ արգօղակարերը: Գնդաձեւ ուլունքները ձգման եւ փաթաթման եղանակով: Որոշ նմուշների առանցքի մօտ առկայ է ապակէ զանգուածի ելուստ (անցքը՝ 1,7-1,5 մմ, մեծութիւնը՝ 3,9-3,1 մմ): Ապակէ գլանաձեւ 17 ուլունքների պատրաստման եղանակը նոյնն է: Այս դէպքում մանրադիրելուում են էլիպսաձեւ պղպղակներ (երկաւորութիւնը՝ 0,7- 2,1 մմ, առանցքը՝ 1,2-1,5 մմ): Հաւաքածոյում առկայ կրկնակի գնդերի տեսքով երկու ուլունքները ոչ թէ տարբեր տեսակի են, այլ՝ աքցանով անյաջող կտրելու արդիւնք (աղ. IV, նկ. 12):

43 А. Львова, Пронизки способы изготовления изделий из стекла, Археологический сборник, N21, Гос. Эрмитажа, 1980, стр. 75:


Բարդ յօրինուածքային ուլունքները 24-ն են (երկարութիւնը՝ 5-9 մմ, տրամագիծը՝ 2,5-5 մմ, առանցքի չափերը՝ 0,15-0,18 մմ): Հիմնական ապակէ զանգուածը բացից մուգ դարչնագոյն է, ուլունքների վրայ արուած պարուրաձեւ գալարները կա՛մ նոյն, կա՛մ աւելի բաց գոյնի են, այսինքն՝ կա՛մ նոյն, կա՛մ տարբեր ապակէ զանգուածից են: Պարոյրի շերտի հաստութիւնը տատանուում է 0,2-1 մմ սահմաններում: Գալարապատումը կատարուել է, երբ ուլունքահատիկը դեռ մածուցիկ վիճակում գտնուել է մետաղալարէ առանցքաձողի վրայ: Մանրադիրտակի տակ շատ լաւ երեւում են զօղակարերը: Որոշ ուլունքների պարոյրների վրայ պլիգմենտային ներկանիւթով կատարուել է նախազարդում՝ պարոյրներին զուգահեռ կամ հորիզոնական ուղղութեամբ: Մի քանի ուլունքների մանրադիրտակային հետազօտութիւնը թոյլ է տալիս եզրակացնել, որ դրանք պատրաստուած են նոյն ապակէ զանգուածից եւ նոյնատիպ տեխնիկայով: Հնարաւոր է, որ դրանք պատրաստուել են նոյն վարպետի կողմից կամ՝ նոյն արհեստանոցում:

Ապակէ բաց դարչնագոյն, մուգ մոխրագոյն խալերով ելունդաւոր (երկարու-


թիւնը՝ 0,7-1 մմ) ուլունքահատիկներից (7 հատ) երկուսը գնդաձեւ են, հինգը՝ տակահատ: Վերջինները (երկարութիւնը՝ 3-5 մմ, առանցքի մօտ՝ 1,5-2 մմ) նոյնպէս պատկանում են տեխնոլոգիական բարդ յօրինուածքային տիպին: Պատրաստուել յօրինուածքային տիպին են փաթաթման եղանակով, շատ լաւ երեւում են զօղակարերը (աղ. IV, նկ. 11): Ուլունքների եզրերն անհարթ են, որոշ դէպքերում պահպանուած են պարուրաձեւ փաթաթման ժամանակ առանցքից աղօսները: Երեւում են նաեւ եռանկյան եզրերը (մեծութիւնը՝ 0,7-1 մմ) ուլունքին միակցելու եզրերը:

Բարդ յօրինուածքով ապակէ ուլունքները տեխնոլոգիական տիպ են կազմում, քանի որ պատրաստուած են միեւնոյն կամ միմեկի հետեւանման ապակէ զանգուածներից, հետեւանման քիմիական նոյն բաղադրութեամբ՝ ունեն քիմիական նոյն բաղադրութիւնը, եփման կամ եռակալման նոյն ռեժիմը, եփման կամ եռակալման նոյն յոյնատիպ միջն ու պատրաստուած են նոյնատիպ պատրաստմամբ: Ապակէ ուլունքների պատրաստման համար օգտագործուել է փաթաթման, ձգման եւ ոչ փչման եղանակը, թաթման, ձգման եւ ոչ փչման եղանակը, ինչը ենթադրել է տալիս, որ ապակէ զանգուածը ունեցել է մեծ մածուցիկութիւն:


Աղիւսակ I



Աղիւսակ II



Աղիւսակ III



Աղիւսակ IV

